ԿԱՋՄՎԱԾ է 02.07.2018թ
ԸՆԴՈՒՆՎԱԾ է
«ՄԵՐ ՏՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՆ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ
«02» 07 2018
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝
ՎԱՉԱԳԱՆ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ՏՊԱԳՐՎԱԾ է 2 ՕՐԻՆԱԿ
ՕՐԻՆԱԿ 1.
ԳՐԱՆՑՎԱԾ է
ՀՀ ԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
Գրանցման ամսաթիվ 22.09.2018
Գրանցման համար 211.122.103902 4
ՀՎՀՀ 02[illegible]48

«ՄԵՐ ՏՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՆ Է»

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

„Մեր տունը Հայաստանն է„ կուսակցության Ծրագիրը

Կուսակցությունը փաստելով, որ Հայաստանն անցել է պետականության ստեղծման, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության ձևավորման առաջնային իուլերը, արձանագրելով, որ երկրում առկա են սոցիալական, տնտեսական, մշակութային, կրթական և այլ բազմաթիվ հիմնահարցեր, միտված է իր գործունեությունը նպատակաուղղել մեր երկրի հզորացմանը:
Կուսակցությունն առկա հիմնախնդիրների լուծման հստակ մեխանիզմների ներդրմանը պետք է անի ամեն հնարավորը Հայաստանը ժողովրդավարական, իրավական և տնտեսապես հզոր երկիր դարձնելու համար:
Հայաստանը պետք է դառնա այնպիսի մի հզոր պետություն, որտեղ ամեն ինչ կատարվում է հանուն մարդու բարեկեցության:

1. Կուսակցության գործունեության հիմնարար սկզբունքները

1.1 «Մեր տունը Հայաստանն է» կուսակցությունը (այսուհետև՝ Կուսակցություն) անհատական անդամության հիման վրա ստեղծված հասարակական միավորում է, որի գործունեության նպատակը հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցել :
1.2 Կուսակցությունը իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, ՀՀ գործող օրենսդրությանը,միջազգային պայմանագրերի, սույն Կանոնադրությանն ու իր Ծրագրին համապատասխան:
1.3 Կուսակցությունը իր գործունեությունըհիմնվում է անդամության կամավորության, ինքնակառավարման, անդամների իրավահավասարության, օրինականության և հրապարակայնության սկզբունքների վրա:
1.4 Կուսակցության անվանումն է՝ «Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն (հապավումը՝ ՄՏՀԿ):
1.5 Կուսակցության գտնվելու հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կոնդ փող. 88տուն:
1.6 Կուսակցությունը միավորում է Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիներին, որոնք կրում են ազգատական ժողովրդավարական գաղափարներ, որոնց համար ամենամեծ արժեքը Հայրենիքն է ու Հայաստանի ամուր պետականությունը:
1.7 Կուսակցությունը խրախուսում է ազատ շուկայական տնտեսության արմատավորումն ու զարգացումը, սեփականության տարբեր ձևերի գոյու-

և ազատ մրցակցությունը, որտեղ պետությունը պետք է ունենա իր կարգավորիչ դերը:
1.8. Կուսակցությունը տնտեսության զարգացման առաջնահերթ խնդիրներից է համարում՝
ա/ արդյունաբերության հիմնական ճյուղերի զարգացումը,
բ/ հանրապետությունում առկա հումքային ռեսուրսների ճիշտ և արդյունավետ օգտագործումը,
գ/ պետության կողմից արտադրողների համար հումքի աղբյուրների և վաճառահանման շուկաների ապահովման գործում առավելագույն նպաստավոր պայմանների ու երաշխիքների ստեղծումը,
դ/ ֆինանսա-բանկային, վարկային և հարկային ճիշտ քաղաքականության իրականացումը,
ե/ գյուղացիներին և գյուղացիական տնտեսություններին օժանդակելը, գյուղատնտեսության զարգացման համար գործուն վարկային համակարգերի և հարկային ճկուն արտոնությունների մեխանիզմներ ներդնելու միջոցով,
զ/ հետևողական և մշտական պայքարը ստվերային տնտեսության դեմ:
1.9. Երկրում տնտեսության զարգացումը պետք է հանդիսանա հասարակության բոլոր անդամների բարեկեցության աճի գրավականը:
1.10. Կուսակցությունը, երկրի տնտեսության, գիտության և մշակույթի զարգացման հիմնական խոչընդոտներից է համարում կոռուպցիայի առկայությունը: Հետևաբար, անհրաժեշտություն է դարձել գործուն հակակոռուպցիոն մեխանիզմների ներդնումը և հետևողական պայքարն այդ մեծագույն չարիքի դեմ: Այդ պայքարին կուսակցությունը ներգրավելու է հասարակության լայն զանգվածներին և հատկապես կարևորում է զանգվածային լրատվության միջոցների դերը:
1.11. Հայաստանում, ինչպես ամեն մի անցումնային շրջան անցնող երկրում, տիրում է ծայրաստիճան լարված սոցիալական վիճակ: Կուսակցությունը առաջնային է համարում ժողովրդի սոցիալական վիճակի մեղմացումը, մասնավորապես՝ կենսաթոշակների և աշխատավարձների բարձրացման, նոր աշխատատեղերի ստեղծման, նախկին ավանդների հնարավորին չափ բարձր հարաբերակցությամբ և ողջամիտ ժամկետներում վերադարձման և տարբեր արտոնությունների ճկուն համակարգերի ներդրման միջոցներով:
1.12. Հանրապետությունում տարբեր խրախուսական միջոցների ներդրմամբ պետք է բարձրացնել ծնելիության մակարդակը:
1.13. Սոցիալական քաղաքականությունը պետք է երաշխավորի սոցիալական ծառայությունների մատչելիությունը:
1.14. Կուսակցությունը առանձնակի ուշադրություն է դարձնելու զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքների, հաշմանդամների և ծերերի սոցիալական խնդիրների լուծմանը:
1.15. Տարբեր օրենքների ու այլ իրավական ակտերի ներդրմամբ Կուսակցությունն անհրաժեշտ է համարում և պայքարելու է ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություններ կտան ազատամարտիկներին, հայրենիքի պաշտպանության ու հզորացման գործում մեծ ներդրումներ

ունեցողներին ու նրանց ընտանիքներին իրենց հայրենիքում արժանավայել ապրելու, աշխատելու և ստեղծագործելու:
1.16. Առողջապահությունը պետք է լինի բարձրորակ և մատչելի լինի բոլորին: Կուսակցությունն այդ բնագավառում տեսնում է ընդհանուր քաղաքականության և ծրագրերի մշակման ու օրենսդրական դաշտի կատարելագործման հրատապ իրականացման անհրաժեշտություն և հետամուտ է լինելու դրանց լուծմանը:
1.17. Կուսակցությունը կարևորում է գիտության, կրթության մշակույթի և տուրիզմի զարգացումը: Նշված բնագավառներում Հայաստանն ունի մեծ ավանդույթներ և անհրաժեշտ է հենվելով այդ ավանդույթների վրա զարգացնել ու համաշխարհային մակարդակի հասցնել Հայաստանի գիտությունը, կրթությունը, մշակույթը և տուրիզմը, որը կնպաստի և երկրի համաշխարհային հեղինակության աճին և նրա հարստացմանն ու հզորացմանը:
1.18. Կուսակցությունը մեծ կարևորություն է տալիս Հայաստանի բնապահպանական խնդիրների լուծմանը և համակողմանի ու հետևողական պայքար է մղելու այդ բնագավառում օրենսդրական ակտերի ընդունման ու դրանց անարգելք կիրառման համար:
1.19. Արտաքին հարաբերությունների բնագավառում Կուսակցությունն իրեն հասանելի բոլոր միջոցներով ձգտելու է՝
ա/ միջազգային ասպարեզում Հայաստանի հեղինակության բարձրացմանը,
բ/ միջազգային հանրության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության և որպես ինքնուրույն պետության ճանաչմանը,
գ/ միջազգային անվտանգության և կայունության ապահովմանը,
դ/ օտարերկրյա պետություններում մեր քաղաքացիների և հայրենակիցների իրավունքների և արժանապատվության պաշտպանությանը,
ե/ միջազգային բոլոր հեղինակավոր կառույցներում Հայաստանի ինտեգրմանը,
զ/ Հայաստանի ռազմավարական գործընկերներ հանդիսացող երկրների հետ համակողմանի փոխգործակցության զարգացմանը,
է/ կոնֆլիկտային իրավիճակների քաղաքական լուծումների մեխանիզմների կատարելագործմանը:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

2.1. Կուսակցությունն իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու է՝ բնակչության քաղաքական կամքի ձևավորման վրա ազդելու, պետական և տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինների ընտրություններին մասնակցելու, բնակչության իրավունքներն ու օրինական շահերն այդ մարմիններում ներկայացնելու և առկա հիմնախնդիրների լուծման վերաբերյալ հիմնավորված ու իրատեսական մոտեցումներ առաջադրելու միջոցով:
2.2. Կուսակցության նպատակներն ու խնդիրներն են՝

ա/ պաշտպանել Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, նպաստել իրավական, ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության ձևավորմանը՝ օրինական միջոցներով ու ձևերով իշխանության հասնելու միջոցով,
բ/ ազգային գլոբալ հիմնախնդիրների վերաբերյալ կազմակերպել քննարկումներ, ուսումնասիրել հասարակության լայն շերտերի կարծիքը և առաջարկություններ ներկայացնել դրանց լուծման վերաբերյալ,
գ/ սատար կանգնել զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին, հատուկ ուշադրություն դարձնել երիտասարդների ռազմա-հայրենասիրական դաստիարակությանը՝ այդ ուղղությամբ մշտապես իրականացնելով տարբեր միջոցառումներ,
դ/ նպաստել Հայաստանում աշխատատեղերի ստեղծմանը, տնտեսության բոլոր ճյուղերի, գիտության, մշակույթի և սպորտի զարգացմանը,
ե/ նպաստել Հայաստանում ազատ և արդար ընտրությունների անցկացմանը, ընտրողների քաղաքական կամքի ազատ արտահայտմանը,
զ/ պայքար մղել Հայաստանում կոռուպցիայի բոլոր դրսևորումների դեմ՝ դրան մասնակից դարձնելով հասարակության լայն զանգվածներին,
է/ բազմակողմանի ուսումնասիրել Հայաստանից բնակչության արտագաղթի պատճառները, նպաստել դրանց վերացմանը և հետևողական քարոզչություն իրականացնել դադարեցնելու այդ ազգակործան երևույթը,
ը/ նպաստել երկրում աղքատության կրճատմանը, մարդկանց բարեկեցիկ կյանքի ապահովմանը,
թ/ նպաստել Հայաստանում քաղաքական մշակույթի արմատավորմանն ու զարգացմանը, բնակչության գաղափարական և քաղաքական մակարդակի բարձրացմանը: